

Ֆինանսական միջնորդների շրջանակ (FIF) – ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓՄՁ վարկավորում

Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	56188
Բիզնես ոլորտ	Դեպոզիտային վարկ (բանկեր)
Ծանուցման տեսակ	Մասնավոր
Բնապահպանական կատեգորիա	ՖՀ
Հաստատման ամսաթիվ	Սեպտ. 24, 2025 թ.
Կարգավիճակ	Սպասում է հաստման
Անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվը	Հոկտիսի 30, 2025 թ.

Ծրագրի նկարագրություն

Մինչև 150 միլիոն եվրոյի չափով առաջնային վարկի տրամադրում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ «Ընկերություն»): Հնգամյա վարկը կտրամադրվի երկու փուլով. առաջին փուլ՝ մինչև 100 միլիոն եվրոյի չափով, և երկրորդ փուլ՝ մինչև 50 միլիոն եվրոյի չափով:

Ծրագրի նպատակները

Վարկը կտրամադրվի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ ՄՓՄՁ (միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների) վարկային պորտֆելի աճը խթանելու նպատակով՝ համաձայն Ֆինանսական միջնորդների շրջանակի («FIF») համապատասխանության չափանիշներին:

Անցումային ազդեցություն

Վաղ անցումային ազդեցության ցուցանիշը՝ ETI 60
Առաջարկվող գործարքը կխթանի մասնավոր հատվածի վարկավորումը Հայաստանում: Վարկը համահունչ է Ֆինանսական միջնորդների շրջանակի նպատակներին՝ խթանելով «Մրցունակ» և «Կանաչ» որակների զարգացումը ընկերության ՄՓՄՁ պորտֆելի ընդլայման միջոցով՝ կենտրոնանալով մարզային վարկավորման վրա, ներգրավելով նոր հաճախորդների և ՎԶԵԲ-ի ներդրումից ստացված միջոցների 40%-ը հատկացնելով «Կանաչ տնտեսության անցման» ծրագրին համապատասխանող ծրագրերին:

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի առաջատար ունիվերսալ բանկերից մեկը, որը զբաղեցնում է ընդհանուր վարկային շուկայի 21%-ը: Բանկը տրամադրում է ծառայությունների ամբողջական շրջանակ կորպորատիվ, փոքր և միջին բիզնեսին, ինչպես նաև ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդներին: «Ամերիաբանկ»-ը գործում է Հայաստանի մեծ քաղաքներում և առավել բնակեցված շրջաններում գտնվող 26 մասնաճյուղերի միջոցով՝ ունենալով ավելի քան 2000 աշխատակից:

ՎՁԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

150,000,000.00 Եվրո

Ծրագրի ընդհանուր արժեք

150,000,000.00 Եվրո

Հավելյալություն

Ֆինանսավորման կառուցվածք

Սույն գործարքը կտրամադրի միջինից մինչև երկարաժամկետ ֆինանսավորում՝ արտոնյալ ժամկետով, որը շուկայում լայնորեն մատչելի չէ:

Գիտելիք, նորարարություն և կարողությունների զարգացում

Ծրագրի շրջանակում իրականացվող Տեխնիկական համագործակցության («ՏՀ») միջոցով Գործընկեր ֆինանսական հաստատությունը («ԳՖՀ») կկարողանա մուտք գործել շուկայի քիչ ուսումնասիրված շերտեր՝ ներդրումներ կատարելով նորարարական կանաչ տեխնոլոգիաներում, որոնք ներկայումս լիարժեքորեն չեն ֆինանսավորվում Կանաչ ֆինանսավորման գործիքի կողմից:

Ստանդարտների սահմանում. աջակցություն ծրագրերին և հաճախորդներին՝ ավելի բարձր ստանդարտների հասնելու նպատակով

Համապատասխանությունը ֆինանսական միջնորդների շրջանակի քաղաքականության դրույթներին և ֆինանսական պայմանագրերով սահմանված մի շարք պարտավորություններին, ինչպես նաև Բնապահպանական և կայունության բաժնի (ESD) պահանջների իրականացումը կապահովեն վարկային միջոցների նպատակային օգտագործումը, ԲԿԲ լավագույն փորձի կիրառումը և ֆինանսական ռիսկերի կառավարումը: Բացի այդ, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն կօգտվի ՎՁԵԲ -ի կողմից մշակված առցանց «Անգիտակցական կողմնակալության ուսուցման» (Unconscious Bias Training - UBT) մոդուլից օգտվելու հնարավորությունից: Այս ուսուցման նպատակը վարկավորման գործընթացում

տղամարդկանց և կանանց հանդեպ առկա անգիտակցական կողմնակալության նվազեցումն է՝ նպաստելով վարկային մասնագետների և հաճախորդների հետ աշխատող անձնակազմի որոշումների կայացման գործընթացների կատարելագործմանը՝ վարկային գնահատման և վարկավորման գործելակերպերի վերանայման ժամանակ:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 2019թ.): «Ամերիաբանկը»-ը ՎՇԵԲ-ի ընթացիկ հաճախորդներից է: «Ամերիաբանկ» ՓԲԸ-ից ակնկալվում է պահպանել իր Բնապահպանական և սոցիալական («ԲևՍ») կառավարման համակարգը՝ իր ենթաձրագրերի հետ կապված ռիսկերն ու ազդեցությունները արդյունավետորեն գնահատելու, կառավարելու և վերահսկելու համար: Ընկերությունը պետք է համապատասխանի ՎՇԵԲ-ի ԳՊ 2, 4 և 9-ին, այդ թվում հետևել ՎՇԵԲ ԲՍ բացառությունների ցուցակին:

Այն պետք է համապատասխանի ՎՇԵԲ-ի 2024 թվականի Բնապահպանական և սոցիալական քաղաքականության (ԲՍԸ) բնապահպանական և սոցիալական 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին (ԲՍՊ), ներառյալ ՎՇԵԲ-ի բնապահպանական և սոցիալական բացառությունների ցանկին համապատասխանությունը:

Փարիզի համաձայնագրի համաձայնեցում

Ծրագիրը դիտարկվում է որպես համահունչ Փարիզի համաձայնագրին՝ հիմնվելով ՎՇԵԲ-ի Փարիզի համաձայնեցման մոտեցման կիրառման վրա, որը վերաբերվում է անուղղակի ֆինանսավորմամբ ներդրումներին: Համապատասխանության որոշումը սահմանվում է 1-ին հենասյան (համագործակցող կողմի պարտավորությունը Փարիզի համաձայնագրի նկատմամբ) և 2-րդ հենասյան (ենթագործարքների գտիչ) կիրառման պայմանով:

Կանաչ ֆինանսավորման հատկացում

ՎՇԵԲ-ի ֆինանսավորման 40%-ը դասակարգվում է որպես կանաչ ֆինանսավորում, քանի որ այն աջակցում է կլիմայի մեղմացմանն ուղղված գործունեությանը: Հատկացումը կատարվում է ՎՇԵԲ-ի ներդրումների կանաչ ֆինանսավորման վերագրման մեթոդաբանության համաձայն՝ 5-րդ բաժնի 1.16.ա կետի հիման վրա, համաձայն որի՝ «Ֆինանսական միջնորդների միջոցով անուղղակիորեն ֆինանսավորվող ներդրումները պետք է ներառեն միջոցների «կանաչ» օգտագործում համաձայն հաճախորդների հետ կնքված ֆինանսավորման պայմանագրերում սահմանված պահանջին»:

Ծրագրից ակնկալվող կանաչ արդյունքներն են՝ տարեկան 26,496 տոննա CO₂ արտանետումների կրճատում և տարեկան 345,073 ԳՋ էներգիայի խնայողություն:

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհի ֆինանսավորում

Սույն գործարքի շրջանակում նախատեսվում է տրամադրել նպատակային Տեխնիկական Համագործակցություն (ՏՀ)՝ աջակցելու Ամերիաբանկին GET-ի (Կանաչ տնտեսության անցման) իրականացման գործընթացում: ՏՀ-ն կարևոր դեր ունի՝ ապահովելու GET-ի շրջանակում համապատասխան ենթանախագծերի արդյունավետ իրականացումը, ինչպես

նաև ներդրումների պատշաճ հաշվետվությունն ու մշտադիտարկումը:

Բացի այդ, Ամերիաբանկի ենթավարկառուները կօգտվեն ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ՏՀ ծրագրից, որն ուղղված է կարողությունների զարգացմանը՝ ներառելով վերապատրաստումներ, փորձագիտական գիտելիքների փոխանցում և խորհրդատվական աջակցություն ՄՓՄՁ-ների համար: Ծրագիրը հատուկ շեշտադրում է անում արտահանման ստանդարտների բարելավման վրա՝ նպաստելով արտահանման շուկայի դիվերսիֆիկացմանը, արդյունավետ և նորարարական բիզնես գործելակերպի զարգացմանը, այդ թվում՝ Էլեկտրոնային առևտրի և առցանց վաճառքի հարթակների կիրառմանը («Փոքր բիզնեսի խորհրդատվություն» (ASB) ծրագիր):

Ընկերության կոնտակտային տվյալները

Ներդրողների

հետ կապեր

[ir@ameriabank](mailto:ir@ameriabank.k.am)

k.am (+374

10) 56 11 11

www.ameriabank.am/investors

Վազգեն Սարգսյան 2, Երևան 0010, Հայաստան

ԾԱՓ-ի վերջին թարմացում

Հունիսի 30, 2025 թ.

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎՁԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՁԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎՁԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՁԵԲ-ի հարցումների ձևաթուղթ](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

[ԲՍԶ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՇԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍԶ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դիտարկելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՇԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՇԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍԶ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՇԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետևերդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՇԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Չեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՇԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել

[Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՅԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՅԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՅԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ԾՅԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՅԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՅԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: